# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դիլիջան համայնքի հողամասերը աճուրդային կարգով օտարող հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի աճուրդ - վաճառք

| ԼՈՏ-ի անվանումը | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ | Ծածկագիրը | Մակերեսը՝ քմ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը | Ճանապարհների, առկայության մասին տվյալներ | Ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ | Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լոտ 8 /ԳՀ-24/ | ք. Դիլիջան | 11-003-0408-0021 | 1216,0 | Գյուղատնտեսական նշանակության հող | վարելահող | չկան | դաշտամիջյան ճանապարհ | առկա չեն | ըստ գործող օրենսդրության պահանջների | 972 800 |
| Լոտ 9 /ԳՀ-24/ | ք. Դիլիջան | 11-003-0408-0022 | 1490,9 | Գյուղատնտեսական նշանակության հող | վարելահող | չկան | դաշտամիջյան ճանապարհ | առկա չեն | ըստ գործող օրենսդրության պահանջների | 1 192 720 |

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, հողամասի ելակետային տվյալներին և հատակագծին կարող են ծանոթանալ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնում՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, համայնքապետարանի շենք 2-րդ հարկ:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է Դիլիջանի համայնքապետարան ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ և Դիլիջանի համայնքապետարանի 900405051401 հաշվարկային հաշվին աճուրդի մասնակցության վճարի՝ 50000 դրամի մուծման անդորրագիր: Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդի դրված հողամասի նվազագույն քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Դիլիջանի համայնքի հողամասերը աճուրդային կարգով օտարող հանձնաժողովին՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան 55, Դիլիջանի համայնքապետարանի շենք, 2-րդ հարկ:

Աճուրդը կայանալու է 2025թ. ապրիլի 04-ին ժամը 11.00-ին, Դիլիջանի համայնքապետարանի 2-րդ հարկի նիստերի դահլիճում, հասցեն՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2025թ. մարտի 31-ը, ժամը 18.00: